



# Ագդարարություն Trumpet's Sound **փող**

54-րդ ՏԱՐԻ, ԱՎԱՏՐԱԼԻԱ  
ՄԱՐՏ - ԱՊՐԻԼ 2023





## Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցի ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION  
PUBLISHED BY THE  
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH  
112 SAILORS BAY ROAD, NORTHBRIDGE,  
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJIAN  
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH  
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057  
email: [pastor@armenianbrethren.org](mailto:pastor@armenianbrethren.org)  
URL: [www.acmaust.org](http://www.acmaust.org)

«ԱԶԳԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՂ» երկամսյա թերթը Սիդնեյի Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցու հրատարակությունն է: Պատասխանատու խմբագիր՝ Խովիվ Հրաչ Գույունջյան:

Այս թերթը անվճար բաժանվում է հայրենիքում: Ցանկացողները կարող են դիմել նշված հասցեով:

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սո՛ւրբ եղեք, որովհետև Ես սուրբ եմ.....Հովիվ՝ Հրաչ Գույունջյան

Փարավոնը զիջումներ է առաջարկում.....Դոն Սթորմը

Սուրբ Հոգու ներգործությունը .....Դավիթ Դոկտորյան

Քրիստոսի վերադարձը, թագավորությունը  
և երկրային վերջին դատաստանները (3) .....ՉՄԵԸ պանորամա

Օգնություն եմ փնտրում .....Նելլ Բուքման

Ո՞ր դուռը.....Վեր. Հովսեփի Հովսեփյան

Հիսուսը՝ մեր կարեկիցը .....Վարդան Սարգիսյան

Հայաստանի ՄԱԸ.....ՄԱԸ

## **Սո՛ւրբ եղեք, որովհետև Ես սուրբ եմ**

**Ո**րպես Աստծո զավակներ՝ մենք կանչված ենք սրբության կյանք ապրելու: Ոմանք մտածում են, թե սրբությունը անցյալի հավատացյալների կամ աստվածաշնչյան ժամանակների համար է, իսկ ուրիշները կարծում են, թե սուրբը արձան է կամ սրբապատկեր: Որպես Տեր Հիսուս Քրիստոսի հետևորդներ՝ բոլոր հավատացյալները կանչված են սուրբ լինելու: Աստվածաշունչը շատ հստակ է ասում.

- «Ուստի, սո՛ւրբ եղբայրներ, երկնային կոչման մասնակիցներ, նայեցե՛ք մեր դավանության Առաքյալին և Քահանայապետին՝ Քրիստոս Հիսուսին» (Եբր. 3:1):
- «Ուստի որպես Աստծո ընտրյալներ, սուրբ և սիրելի...» (Կող. 3:12):

### **Ի՞նչ է նշանակում սուրբ լինել**

Սուրբ լինել նշանակում է առանձնացված, զատված, Աստծո կողմից օգտագործվելու համար մի կողմ դրված լինել:

Սուրբ կյանքով ապրել նշանակում է Նրան տալ մեր ամեն ինչը և ամեն օր քայլել Նրա սրբությամբ՝ թույլ տալով Նրան ամբողջովին փոխել ու ձևավորել մեզ Իր պատկերի նման:

Սուրբ կյանքով ապրելը պատվիրան է:

Աստված պատվիրել է մեզ սուրբ լինել:

Ամեն ջանք գործադրե՛ք բոլորի հետ խաղաղ ապրելու և սուրբ լինելու համար: «Խաղաղության հետևեցեք բոլոր մարդկանց հետ և սրբության, առանց որի ո՛չ ոք չի տեսնելու Տիրոջը» (Եբր. 12:14): «Ինչպես ձեզ Կանչողը սուրբ է, դուք էլ ձեր ամբողջ վարքով սո՛ւրբ եղեք: Քանի որ գրված է. «Սո՛ւրբ եղեք, որովհետև Ես սուրբ եմ»» (Ա Պետ. 1:15-16):

Եբր հնազանդվում ենք Աստծո պատվիրանին, մեր կապը Նրա հետ ամրապնդվում է, ինչի արդյունքում Նա ավելի է հայտնում Իր Անձը

մեզ: Բայց մենք պետք է ամեն օր ապավինենք Նրան, քանի որ մեր սրբությունը գալիս է Նրանից և ոչ թե մեր ուժերից:

### **Սրբությունը գալիս է Աստծուց**

Դուք չեք կարող ինքներդ ձեզ սրբացնել: Սրբությունը գալիս է Աստծուց:

Որքան մոտենանք Քրիստոսին, այնքան ավելի կմաքրվենք, քանի որ Նա մեզ հաշտեցրեց Աստծո հետ: Մենք չենք կարող ինքներս մեզ մաքրել, միայն Աստված կարող է դա անել:

«Որովհետև, Նրան՝ Ով չգիտեր մեղքը, Աստված մեզ համար մեղք դարձրեց, որ մենք Նրանում Աստծո արդարությունը դառնանք» (Բ Կորնթ. 5:21):

### **Սուրբգրային որոշ հատվածներ՝ խորհրդածելու համար**

- «Եվ ձեզ, որ մի ժամանակ օտարացած էիք և մտքով թշնամի՝ չար գործերի մեջ, հիմա հաշտեցրեց՝ Իր մարդեղեն մարմնի մեջ՝ Իր մահվամբ, որ ձեզ սուրբ, անքիծ և անարատ կանգնեցնի Իր առջև» (Կող. 1:21-22):
- «Ով մեզ փրկեց և սուրբ կոչումով կանչեց, ոչ ըստ մեր գործերի, այլ՝ Իր նախասահմանության և շնորհի համաձայն, որ տրվեց մեզ Քրիստոս Հիսուսով՝ հավիտենական դարերից առաջ» (Բ Տիմ. 1:9):
- «Ինչպես մեզ Նրանով ընտրեց աշխարհի հիմնումից առաջ, որպեսզի մենք սիրով սուրբ և անարատ լինենք Նրա առջև» (Եփես. 1:4):

Աստված ձեզ սուրբ է դարձրել և սրբությամբ քայլելու կարողություն է տվել: Այնուամենայնիվ, դա չի դրսևորվի ձեր կյանքում, եթե Նրան հնազանդվելու և Նրա հետ քայլելու հստակ որոշում չկայացնեք:

Աղոթում եմ, որ ձեր սրտի աչքերը լուսավորվեն, որպեսզի լիովին ընդունեք Աստծո արդարության պարգևը: Եվ մինչ դա կանեք, ես աղոթում եմ, որ Սուրբ Հոգու զորությամբ ապրեք սրբության կյանքը՝ Աստծո համար առանձնացված:

## Փարավոնը զիջումներ է առաջարկում

Նախորդ սերտողությունում քննարկեցինք երկու ուղիներ, որոնցով փարավոնը դիմադրեց Աստծուն: Նա օգտագործեց իր կախարդներին՝ ընդօրինակելու այն, ինչ Աստված անում էր, և խստացրեց իր սիրտը Տիրոջ դեմ ու հրաժարվեց Նրան հնազանդվելուց: Այժմ նա, մարդկային զիջումներ առաջարկելով, փորձում է հաղթել Աստծուն:

### 3. Գժկամ զիջումներ

Սկզբում փարավոնը հրաժարվեց Իսրայելին ազատ արձակելուց, բայց հետո պահանջեց, որ իր երկրից անհապաղ հեռանան: Այս երկու դեպքերի միջև ընկած ժամանակահատվածում նա դժկամ զիջումներ առաջարկեց, որոնց մեջ ամեննին էլ Աստծուն պատվելու մտադրություն չկար, և որոնք անընդունելի էին և՛ Մովսեսի համար, և՛ իհարկե, Աստծո համար:

**ա. Փոխզիջում 1.** «Գնացե՛ք, ձեր Աստծուն զոհ մատուցեցե՛ք իմ երկրի մեջ»

Փարավոնը հավանաբար հույս ուներ, որ իր առաջարկած զիջումները կհաճեցնեն Մովսեսին ու Ահարոնին: Նա իսրայելացիների վրա այնպիսի տպավորություն էր ուզում թողնել, թե ինքը նրանց մեծ առանձնաշնորհում է պարգևում:

Այնուամենայնիվ, սա լիովին անընդունելի էր: Մովսեսը մատնանշեց այն դժվարությունները, որոնց ակնհայտորեն իսրայելացիները հանդիպելու էին եգիպտացիների կողմից: Նրանք պետք է զոհեր մատուցեին Տիրոջը. մի բան, որ եգիպտացիների համար զարշելի էր: Նրանց արձագանքը քաղաքացիական անկարգություններ կառաջացներ: Մովսեսը պատկերացնում էր, թե ինչպես եգիպտացիները կքարկոծեին իսրայելացիներին վերջիններիս զոհ մատուցելիս:

Սակայն ավելի վատ էր այն, որ իսրայելացիները Եգիպտոսում դեռևս ստրուկի կարգավիճակով էին մնալու: Երբ զոհաբերություններն ավարտվեին, փարավոնը պնդելու էր, որ նրանք վերադառնան

իրենց գործին: Նրանց սոցիալական դիրքի բարելավում չէր սպասում: Ուստի Մովսեսը իրավացիորեն պնդեց, որ խորայելացիները եռօրյա ճանապարհորդության գնան անապատ: Ազատ արձակվելու համար ազգը պետք է ամբողջովին բաժանվեր Եգիպտոսից:

## **բ. Փոխգիշում 2. «Միայն թե հեռու չգնա՛ք»**

Քանի որ երկիրը ենթարկված էր շնաճանճերի ժանտախտի հարվածին, փարավոնը ստիպված էր ինչ-որ կերպ գործել: Այս անգամ նա կարծես ավելի մեծ զիջման է գնում: Նա ասում է. «Ես ձեզ թույլ կտամ, որ գնաք անապատում ձեր Տեր Աստծուն զոհ մատուցեք, միայն թե հեռու չգնա՛ք, ինձ համար աղոթեցե՛ք»:

Ակնհայտ է, որ փարավոնն ուզում էր, որ խորայելացիները մոտ լինեին, որպեսզի կարողանար ստիպել նրանց վերադառնալ աշխատանքի: Մովսեսը չառարկեց: Մենք չգիտենք, թե ինչու: Արդյոք Մովսեսը գիտե՞ր, թե ինչպես կվարվեր փարավոնը, երբ շնաճանճերը հեռացվեին, թե՞ նա հավատում էր, որ Աստված կպաշտպանի իրենց: Թե ինչու Մովսեսը չառարկեց փարավոնի առաջարկին, այդքան էլ էական չէ: Հենց որ շնաճանճերը հեռացան, փարավոնը մտափոխվեց:

Աշխարհին մոտ լինելու մեջ վտանգ կա: Նա, ով մոտ է աշխարհին, ամենայն հավանականությամբ կգնա այնտեղ: Դովտը սխալվեց՝ մնալով Սողոմոն, երբ Աբրահամը գերությունից ազատեց նրան: Ի վերջո, նրա վկայությունը ամբողջությամբ տապալվեց:

## **գ. Փոխգիշում 3. Միայն ոմանց թույլատրվեց գնալ**

Փարավոնն ասաց Մովսեսին, որ նրանք կարող են գնալ ու ծառայել իրենց Աստծուն: Բայց նա ուզում էր իմանալ, թե ովքեր են գնալու: Երբ նա իմացավ, որ բոլորը պետք է գնան, պայմաններ առաջ քաշեց: Միայն տղամարդկանց թույլ տրվեց գնալ ու Տիրոջը ծառայել:

Սա նորից ընդունելի տարբերակ չէր, քանի որ տղամարդիկ շուտով կվերադառնային իրենց ընտանիքներ: Ժողովուրդը դեռ գերության մեջ կլիներ, և ոչ մի երաշխիք չկար, որ դաժան ստրկության պայմանները որևէ կերպ կթուլանային:

Այնուամենայնիվ, Մովսեսը ստիպված չէր արձագանքել փարավոնի սահմանափակումներին: Նա վտարվեց փարավոնի ներկայությունից:

#### **դ. Փոխգիշում 4. «Թող ձեր հոտերն ու նախիրները մնան»**

Փարավոնը գիտակցում էր, որ պետք է որոշ փոխգիշումների գնա. «Գնացե՛ք և պաշտեցե՛ք Տիրոջը, միայն թող ձեր հոտերն ու նախիրները մնան. ձեր ընտանիքներն էլ թող ձեզ հետ գնան»: Երեք օրվա թանձր խավարի սարսափելի փորձառությունից հետո փարավոնը հասկանում էր, որ պետք է ինչ-որ բան աներ: Բայց նա դեռ ուզում էր վերահսկողություն պահպանել իսրայելացիների վրա: Այսպիսով, որոշ սահմանափակումներ մնացին: Նրանք կարող էին իրենց երեխաների հետ գնալ, սակայն հոտերն ու նախիրները պետք է մնային Եգիպտոսի երկրում:

Փարավոնը գիտեր, որ իսրայելացիներին անհրաժեշտ են իրենց հոտերը՝ զոհ մատուցելու համար: Բայց նա նաև գիտեր, որ նրանք չէին կարող ընդմիշտ թողնել իր երկիրը՝ առանց հոտերի ու նախիրների: Իսրայելացիները հովիվ էին դեռևս Աբրահամի ժամանակներից, և հոտերն ու նախիրները նրանց կյանքի անբաժան մասն էին կազմում: Հերթական անգամ փարավոնն ամեն ինչ անում էր իսրայելացիներին որպես ստրուկ պահելու համար:

#### **Ի՞նչ էր պահանջում Տերը**

Աստված ուզում էր, որ Իր ժողովուրդն ամբողջությամբ դուրս գար Եգիպտոսից: Նա ծրագրել էր ապագա նրանց համար, որտեղ նրանք կլինեին այն ժողովուրդը, որի միջոցով գալու էր փրկության պատգամը: Դրա համար իսրայելացիները պետք է լիովին զատվեին Եգիպտոսի կռապաշտական ազդեցություններից: Նրանք ստիպված էին ամբողջությամբ լքել Եգիպտոսը: Միայն այդ դեպքում կկարողանային իրականացնել Աստծո նախատեսած նպատակը իրենց համար:

#### **Փոխգիշումներ Մովսեսի կողմից**

Մովսեսը գիտակցում էր, որ փարավոնն ամեն ինչ կանի իսրայելացիներին որպես ստրուկ պահելու համար: Աստված հստակ ասել

էր նրան, որ փարավոնը թույլ չի տա ժողովրդին գնալ նույնիսկ «հզոր ձեռքով»։ Մովսեսը նաև գիտեր, որ Աստծո ծրագիրը Իր ժողովրդի ամբողջական արձակումն էր, հետևաբար ոչ մի փուլում որևէ զիջում չարեց փարավոնին։ Նրա առաջին պարտականությունը Տիրոջը հավատարիմ մնալն էր։ Նա հավատարմորեն ներկայացրեց Տիրոջ պահանջները և չընդունեց փարավոնի փոխզիջումները։

### **Այսօր՝ մեզ համար**

Մենք պետք է քաջ գիտակցենք, որ սատանան չի ուզում կորցնել վերահսկողությունը մեզ վրա, կամ, որպես այլընտրանք, նա ուզում է ունենալ որոշակի ազդեցություն, որպեսզի արդյունավետ չլինենք Տիրոջ համար մեր վկայության մեջ։

Որքանով ենք մխրճված աշխարհի գործերի մեջ։ Տիրոջ փափագն այն է, որ մենք հավատարիմ լինենք այն պատվերներին, որոնք Նա տալիս է մեզ։ Արդյոք անո՞ւմ ենք այնպես, ինչպես Նա է մեզ հանձնարարում, թե՞ ոչ։

Դոն Սթոյն



«Ուստի, Աստծուն նմանվողներ եղեք՝ որպես սիրելի զավակներ. և սիրո մեջ քայլեցեք, ինչպես Քրիստոսն էլ մեզ սիրեց և Իր անձը մեզ համար տվեց՝ անուշահոտ պատարագ ու զոհ լինելով Աստծուն։ Բայց պոռնկություն և ամեն տեսակ պղծություն կամ ագահություն չլինի ձեր մեջ, դրանք թող անգամ չհիշատակվեն ձեր մեջ, ինչպես վայել է սրբերին, ո՛չ էլ աղտոտ կամ հիմար խոսակցություններ, կամ խեղկատակություն, որ չի վայելում ձեզ, այլ միշտ գոհություն թող մատուցվի։ Քանի որ գիտեք, որ ոչ մի պոռնիկ, պիղծ կամ ագահ մարդ, որ կռապաշտ է, ժառանգություն չունի Քրիստոսի և Աստծո արքայության մեջ։ Թող ոչ ոք դատարկ խոսքերով ձեզ չխաբի, որովհետև սրանց պատճառով է, որ Աստծո բարկությունը գալիս է անհնազանդության որդիների վրա։ Ուրեմն՝ նրանց մասնակից մի՛ եղեք»։

**Եփես. 6:1-7**

## Սուրբ Հոգու ներգործությունը

(Ա Հովհ. 4:1-6)

Ա Հովհ. 4:1-6 համարները խոսում են քրիստոնյայի հոգում Սուրբ Հոգու ներկայության, առաջնորդության և գործության մասին: Նա, ով Աստծուց է, Քրիստոսի Հոգին ունի իր մեջ և հաղթական կյանք է ապրում աշխարհում, որովհետև ավելի մեծ է Նա, ով քրիստոնյայի մեջ է, քան նա, ով աշխարհում է:

Անհրաժեշտ է իմանալ Սուրբ Հոգու կարևորությունը և Նրա դերը մեր կյանքում: Սուրբ Հոգին է փոխում մեր կյանքերը: Երբ Սուրբ Հոգին չունենք, նմանվում ենք Պետրոս առաքյալին՝ Քրիստոսի աշակերտին, ով, վախենալով մարդկանցից, ուրացավ Քրիստոսին, երբ Նրան պետք է դատեին: Պողոս առաքյալը կյանքի մեծ հեղաշրջում ունեցավ, երբ Սուրբ Հոգին սկսեց ներգործել իր մեջ: Մենք նույնպես կարող ենք Քրիստոսին ընդունել որպես Տիրոջ, սակայն փոփոխություն տեղի չի ունենա մեր կյանքում առանց Սուրբ Հոգու ներգործության: Սուրբ Հոգին առաջնորդում է մեր քայլերը, կառավարում է մեր խորհուրդները և կարողունակ է դարձնում մեզ՝ Իր գործությամբ գործելու: Ի՞նչ սքանչելի է իմանալ, որ «Նա, որ ձեր մեջ է, ավելի մեծ է, քան նա, որ աշխարհի մեջ է»::

Աստծո Խոսքում շատ օրինակներ ենք կարդում մարդկանց կյանքում Սուրբ Հոգու կատարած գործերի մասին: Գործք Առաքելոց 3-րդ գլխում կարդում ենք կաղ մարդու մասին, որին ամեն օր տաճարի Գեղեցիկ դռան մոտ էին դնում, որպեսզի տաճար մտնողներից ողորմություն խնդրի: Պետրոս և Հովհաննես առաքյալները տաճար մըտնելիս տեսան նրան ու մոտենալով՝ ասացին. «Մե՛զ նայիր»: Կաղը հույս ուներ նրանցից որևէ բան ստանալու, երբ Պետրոսն ասաց. «Արծաթ ու ոսկի ես չունեմ, բայց ինչ որ ունեմ, քեզ կտամ. Նագովրեցի Հիսուս Քրիստոսի անունով վե՛ր կաց ու քայլի՛ր», և նրա ձեռքից բռնեց, կանգնեցրեց ու իսկույն կաղը սկսեց քայլել, ցատկել ու Աստծուն օրհնել: Ո՞վ կատարեց այս հրաշքը. Պետրոս առաքյա՞լը, թե՞ Հիսուսի Հոգին: Մի՞թե նա չե՞ր, որ վախենալով մարդկանցից՝

ուրացավ Հիսուսին, սակայն երբ Աստծո Սուրբ Հոգին ստացավ Պենտեկոստեի օրը, նրա կյանքը լիովին փոխվեց: «Քո Վատիս» (որ թարգմանվում է «Ո՞ր ես գնում») վերնագրով գրքից հետևյալ դրվագն են հիշում Պետրոս առաքյալի մասին: Երբ Հռոմի կառավարությունը պիտի ձերբակալեր Պետրոս առաքյալին և խաչեր նրան, բարեկամները պնդեցին, որ քաղաքից հեռանա: Մինչ առաքյալը հեռանում էր, ճանապարհին տեսիլք տեսավ: Հիսուսը երևաց նրան՝ նրա առջևից քայլելով: Պետրոս առաքյալ հարցրեց Հիսուսից. «Ո՞ր ես գնում»: Հիսուսը պատասխանեց. «Ես Հռոմ են գնում՝ քո փոխարեն խաչվելու»: Դրանից հետո Պետրոս առաքյալը ետ դարձավ ու Հռոմ գնաց: Երբ նրան պիտի խաչեին, զինվորներին ասաց. «Ես արժանի չեմ Հիսուսի նման խաչվելու», ուստի Պետրոսին գլխիվայր խաչեցին: Փոփոխությունը առաքյալի կյանքում շատ մեծ էր:

Երբ կարդում ենք Գործք Առաքելոցը, առաքյալների գործերի մասին չէ, որ կարդում ենք, այլ առաքյալների մեջ կատարած Սուրբ Հոգու գործի մասին: Սուրբ Հոգու գործությունը, բժշկությունները, հրաշքները դեռ պատահում են այսօր, որովհետև դրանք միայն առաջին դարին չեն պատկանում. Քրիստոսը նույնն է երեկ, այսօր ու հավիտյան: Առաքյալները միայն գործիքներ էին Աստծո ձեռքում, և Հիսուսն այսօր կարող է անել նույնը Սուրբ Հոգու գործությամբ: Առանց Սուրբ Հոգու գործության ազդեցիկ վկաներ չենք կարող լինել Հիսուս Քրիստոսի համար: Կյանքի փոփոխությունը մեծ է նրանց համար, ովքեր Սուրբ Հոգու գործությունը ունեն և Նրա համար են ապրում: Հիսուսն ասել է. «Բայց դուք գործություն պիտի ստանաք, երբ Սուրբ Հոգին ձեր վրա գա, և Իմ վկաները պիտի լինեք և՛ Երուսաղեմում, և՛ ամբողջ Հրեաստանում, և՛ Սամարիայում, և՛ երկրի ամենահեռավոր ծայրերում»: Հիսուսն այսպես խոստացավ մեզ. «Եթե Ինձ սիրում եք, Իմ պատվիրանները պահեցեք»: Հիսուսը խոստանում է Սուրբ Հոգին ուղարկել. «Եվ Ես Հորը պիտի աղաչեմ, և Նա ձեզ ուրիշ Մխիթարիչ պիտի տա, որ ձեզ հետ մնա հավիտյան:»:

Հիսուսը խոստացավ, որ Սուրբ Հոգին մեր մեջ կմնա, բայց Սուրբ Հոգին ինչպե՞ս կարող է նեղանալ և հեռանալ անձից: Սուրբ Գրքում Սավուղ թագավորի մասին կարդում ենք, որ Աստծո Հոգին նրա վրա եկավ, սակայն վերջում կարդում ենք, որ նրա մեղքերի պատճառով

Աստված Սավուդի աղոթքները չէր լսում ու չէր պատասխանում, որովհետև Սուրբ Հոգին նրան թողել էր: Սավուդ թագավորի կյանքը շատ ցավալի ավարտ ունեցավ. նա ինքնասպան եղավ: Մենք մեր ուժերով չենք կարող ապրել մեր կյանքը Աստծո համար: Տեր Աստվածը մեզ Սուրբ Հոգին խոստացավ: Աշխարհն ինչպե՞ս կիմանա, որ մենք սիրում ենք Նրան: Աշխարհը դրա մասին կիմանա միայն այն ժամանակ, երբ սիրենք իրար: Արդյոք ինչպե՞ս կարող ենք սիրել մեկին, ով մեր դեմ է, ինչպե՞ս կարող ենք աղոթել մեկի համար, ով մեզ ատում է: Այս բոլորը մեր մարդկային ուժերով չենք կարող անել, այլ միայն Սուրբ Հոգու միջոցով, որ մեզ շնորհում է փոփոխություն, աստվածային սեր՝ սիրելու մեր հակառակորդներին: Գործք Առաքելոցում կարդում ենք Սողոսի (Պողոսի) և Շիղայի մասին, թե ինչպես բանտարկվեցին ու ծեծվեցին: Նրանք աղոթում էին ու երգելով փառաբանում էին Աստծուն: Նրանց շնորհիվ բանտապետն ու նրա ընտանիքը քրիստոնյա դարձան: Ինչպե՞ս կարող է քրիստոնյան այդպիսի կյանք ապրել, երբ ցավերի միջով է անցնում: Մեծ թվով հայեր Յեղասպանության սարսափելի տարիներին Աստծուն հարցնում էին, թե ինչպես արդար Աստված թույլ տվեց Յեղասպանությունը: Աշխարհի բոլոր նեղություններն ու դժվարությունները վաղանցիկ են, և Հիսուսը խոստացել է մեզ հետ լինել ամեն ժամանակ: Ինչպես Աստված Պողոսին ու Շիղային օգտագործեց բանտապետի ընտանիքին փրկելու համար, այնպես էլ մենք, երբ դժվարություններով ենք անցնում և չենք հասկանում դրանց պատճառը, Աստված կարողանում է այդ փորձառությունը բարիի փոխելով՝ մեզ օգտագործել ուրիշին օգտակար լինելու համար: Դժվար է հասկանալ, բայց եթե հավատանք, որ ավելի գորավոր է Նա, ով մեր մեջ է, քան նա, ով աշխարհում է, ինչ էլ պատահի մեր կյանքում, Սուրբ Հոգին Իր գործությունը կշնորհի: Եթե հաստատ մնանք մինչև վերջ, Տերը կասի. «Ապրենս, բարի՝ ու հավատարիմ ծառա»: Առանց Հիսուս Քրիստոսի՝ չենք կարող մեր մեղքերի քավությունը գտնել և առանց Սուրբ Հոգու գործության՝ չենք կարող այս քրիստոնեական կյանքը ապրել մինչև մեր կյանքի վերջը:

Հիսուսը համբարձման օրը վերջին պատվիրանը տվեց Իր աշակերտներին՝ ասելով, որ սպասեն, Երուսաղեմից չհեռանան, մինչև

որ վերից ստանան այդ գործությունը: Առանց Սուրբ Հոգու ներգործության՝ չենք կարող վկաներ լինել Հիսուս Քրիստոսի համար: Երբ առաքյալների կյանքը սերտենք, կտեսնենք, որ նրանք ոչինչ չէին կարողանում անել մինչև Պենտեկոստեի օրը, երբ Սուրբ Հոգին նրանց վրա իջավ:

Մատթ. 12:31–32-ում կարդում ենք, որ ամեն մեղք (նույնիսկ Քրիստոսի դեմ գործած մեղքը) կներվի մարդկանց, բայց Սուրբ Հոգու դեմ գործած մեղքը չի ներվելու ո՛չ այս աշխարհում, ո՛չ էլ գալիք աշխարհում: Սա նշանակում է, որ առանց Սուրբ Հոգու տնօրինության ու ներգործության՝ մենք չենք կարող Հիսուսին գալ, փրկվել ու Նրան ընդունել որպես Տիրոջ: Երբ Սուրբ Հոգու դեմ ելնենք, կկորցնենք Քրիստոսին ընդունելու առիթը:

Տերը շնորհի, որ ընդունելով Սուրբ Հոգին՝ կարողանանք մեր կյանքերը Նրա գործությամբ ապրել ու գործել Նրա փառքի համար:

Ծերակուտական՝ Դավիթ Դոկտորյան  
Քաղված՝ «Հատընտիր հոգևոր պատգամներ» գրքից



## ***Քրիստոսի վերադարձը, թագավորությունը և երկրային վերջին դատաստանները (3)***

### **6. Քրիստոսի հաղթական վերադարձը (19:11-21 - 20:1-3)**

Հին Կտակարանի գրողները և մարգարեները անհամբեր սպասում էին այն օրվան, երբ Մեսիան ինչ-որ կերպով աշխարհ կգա Իր ողջ աստվածային թագավորական փառքով և կկառավարի խաղաղության ու արդարության մեջ: Իր տառապանքներում Հոբն ասաց.

«Քանի որ գիտեմ՝ իմ Փրկագնողն ապրում է, ու վերջին օրը Նա կանգնելու է երկրի վրա» (Հոբ 19:25): Անդրադառնալով Տիրոջը՝ Չաքարիան գրեց. «Եվ այն օրը նրա ոտները պիտի կանգնեն Ձիթնյաց լեռան վրա» (Չաք. 14:4): Հովհաննես առաքյալը գրեց. «Ահա նա գալիս է ամպերով, և ամեն աչք նրան կտեսնի» (Հայտ. 1:7):

Տեր Հիսուսը ոչ միայն թագավորելու համար է գալու, այլև ներկայիս ստեղծագործությունը ավարտելու և նոր երկնքի ու նոր երկրի սկիզբ դնելու: Եկե՛ք դիտարկենք հետևյալ տասը պնդումները.

1. «Եվ տեսա երկինքը բացված, և ահա մի ճերմակ ձի, որի հեծյալը Հավատարիմ ու Ճշմարիտ է կոչվում ու արդարությամբ է դատում ու պատերազմում» (Հայտ. 19:11):
2. «Եվ մի հրեշտակ տեսա, որ կանգնած էր արևի մեջ ու բարձր ձայնով աղաղակեց երկնքի մեջ թռչող բոլոր թռչուններին, ասելով. «Եկե՛ք, մեծ Աստծո ընթրիքին հավաքվե՛ք» (Հայտ. 19:17):
3. «Եվ տեսա գազանին ու երկրի թագավորներին ու նրանց գորքերին մի տեղում հավաքված, պատերազմելու Նրա դեմ, որ հեծել էր ձիու վրա ու Նրա գորքերի դեմ» (Հայտ. 19:19):
4. «Եվ մի հրեշտակ տեսա, որ իջնում էր երկնքից, և անդունդի բանալին ու մի մեծ շղթա ուներ իր ձեռքին: Ու բռնեց վիշապին, այսինքն՝ հին օձին, որ Բանասերկուն ու Սատանան է, և կապեց նրան հազար տարով» (Հայտ. 20:1-2):
5. «Եվ տեսա աթոռներ, ու նստեցին դրանց վրա. և նրանց դատավորություն տրվեց» (Հայտ. 20:4):
6. «Նաև Հիսուսի վկայության ու Աստծո Խոսքի համար գլխատվածների հոգիներ տեսա, նրանք, որ գազանին չէին երկրպագել և ոչ էլ նրա պատկերին, ու նրա դրոշմը իրենց ճակատներին ու ձեռքերի վրա չընդունեցին. և ապրեցին ու Բրիստոսի հետ հազար տարի թագավորեցին» (Հայտ. 20:4):
7. «Եվ մի մեծ ճերմակ գահ տեսա, ու նրա վրա նստած էր մեկը (Հայտ. 20:11):

8. «Եվ տեսա փոքր ու մեծ մեռելներ, որ կանգնած էին Աստծո առջև» (Հայտ. 20:12):
9. «Եվ մի նոր երկինք ու նոր երկիր տեսա, քանի որ առաջին երկիրը և առաջին երկինքն անցան, ու այլևս ծով չկար» (Հայտ. 21:1):
10. «Եվ ես՝ Հովհաննեսս, սուրբ քաղաքը՝ Երուսաղեմը տեսա, որ Աստծուց ցած էր իջնում երկնքից՝ պատրաստված, որպես իր ամուսնու համար զարդարված մի հարս» (Հայտ. 21:2):

Սրանք Հայտնության գրքում Հովհաննես առաքյալի կողմից «տեսա» բառով արտահայտված երեսուներկու խոսքերից վերջին տասն եմ: Վերոնշյալ ցանկի առաջին վեցը քննարկելու ենք այս սերտոդությունում, իսկ վերջին չորսը՝ հաջորդում:

Վերադառնալով այս բաժնի թեմային՝ Հովհաննեսը նախ տեսնում է երկինքը բացված, և մի ճերմակ ձի (հաղթական զորության խորհրդանիշը), որի հեծյալը կոչվում է Հավատարիմ ու Ճշմարիտ: Մենք հանդիպեցինք այս տիտղոսին Հայտ. 3:14-ում, մի տիտղոս, որը վերապահված է միայն Տեր Հիսուսին: Այնտեղ ասվում է, որ Նա Աստծո ստեղծագործության Սկիզբն է: Եբրայեցիներին ուղղված մամակի հեղինակը համաձայն է այս պնդման հետ, երբ գրում է. «Որն Իր փառքի լույսն ու Իր էության ստույգ արտահայտությունը լինելով և ամեն ինչ Իր զորության Խոսքով պահելով...» (Եբր. 1:3):

Տեր Հիսուսը՝ որպես Գառ, հենց նոր ավարտեց Իր հարսանեկան արարողությունն ու ընթրիքը Երկնքում: Եկեղեցին, որը բաղկացած է բոլոր ճշմարիտ քրիստոնյաներից, սկսած Պենտեկոստեի օրվանից մինչև Հափշտակությունը, այժմ դարձել է Գառնուկի հարսը և այդպես միշտ լինելու է: Բայց հիմա Նա պետք է Երկիր վերադառնա որպես Մարդու Որդի՝ դատելու բոլոր նրանց, ովքեր հակառակվում են Աստծուն, ու վերականգնելու Երկիրը իր Հազարամյա թագավորության համար:

Այս փուլում Աստված դրդելու է սատանային և նրա չար հանցակիցներին՝ հավաքելու աշխարհի բոլոր զորքերը Արմագեդոն կոչված վայրում. «Եւ նրանց միասին հավաքեց մի տեղ, որ եբրայերեն

կոչվում է Արմագեդոն» (Հայտ. 16:14, 16): Ահա եկավ պահը: Տեր Հիսուսը՝ Հավատարիմն ու Ճշմարիտը, գալիս է Երկնքից՝ պատերազմելու համար, և Հովհաննեսը վառ կերպով նկարագրում է սա. «Եվ Նրա աչքերը կրակի բոցի պես էին, ու Նրա գլխի վրա շատ թագեր կային ու գրված մի անուն ուներ, որ Իրենից բացի ոչ ոք չգիտի: Եվ արյան մեջ թաթախված պատմուճան էր հագել, ու Նրա անունն է ԱՍՏԾՈ ԽՈՍԶԸ: Ու երկնքում գտնվող գործերը Նրա ետևից էին գնում ճերմակ ձիերով՝ ճերմակ ու մաքուր բեհեզներ հագած: Եվ Նրա բերանից մի սրված սուր էր ելնում, որ դրանով հարվածի ազգերին. Նա երկաթե գավազանով կիշխի նրանց վրա և կկոխտի Ամենակալ Աստծո ահեղ ցասման զինու հնձանը: Եվ Իր պատմուճանի ու ազդրի վրա գրված էր. «ԹԱԳԱՎՈՐ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՏԵՐ ՏԵՐԵՐԻ»» (Հայտ. 19:12-16):

Նրա աչքերը, ինչպես բոցավառ կրակը, խոսում են բացարձակապես ամեն ինչ տեսնելու Նրա աստվածային կարողության մասին (հմմտ. Եբր. 4:13): Նրա բազմաթիվ թագերը խոսում են Նրա բացարձակ և գերագույն իշխանության մասին: Նրա անհայտ անունը հիշեցնում է մեզ, որ Նա երբեք չի կարող լիովին ճանաչվել: Արյան մեջ թաթախված պատմուճանը խոսում է Նրա թշնամիների արյան մասին, որը Նա շուտով թափելու է (հմմտ. Ես. 63:1-3): Որպես Աստծո Խոսք՝ Նա Աստծո արտաքին արտահայտությունն է, կամ ինչպես Պողոս առաքյալն է ասում. «Նրա մեջ է բնակվում աստվածության ամբողջ լիությունը՝ մարմնապես» (Կող. 2:9): Նրա բերանից դուրս եկող սրված սուրը խորհրդանշում է Նրա ամենակարող գործությունը (տե՛ս Հովհ. 18:6, Բ Թես. 2:8, Ես. 11:4): Վերջապես, որպես ԹԱԳԱՎՈՐ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՏԵՐ ՏԵՐԵՐԻ՝ Նա տիեզերքի գերագույն տիրակալն է:

Երբ Տեր Հիսուսը Երկնքից գա, Նրան հետևելու են երկնային գործերը, ակնհայտորեն Հին և Նոր Կտակարանների հավատարիմները, ինչպես նաև բոլոր հրեշտակները (հմմտ. Մատթ. 24:30, 25:31): Բայց միայն Տեր Հիսուսն է, որ պատերազմ է մղելու Իր դեմ հավաքված միլիոնավոր զինյալների դեմ: Շատ կարճ ժամանակում Նրա գրեթե բոլոր թշնամիները սպանվելու են սրով (Հայտ. 19:21): Բայց գազանը (աշխարհի բռնապետը) և կեղծ մարգարեն (նեղը) բռնվելու

են և ողջ-ողջ նետվելու են վառվող ծծմբի Կրակե լիճը (Հայտ. 20:14-15): Ենթադրվում է, թե այս երկու մարդիկ այնքան դաժան ու չար են, որ ուղղակիորեն գցվելու են Կրակե լճի մեջ և չեն կանգնելու Մեծ սպիտակ գահի դատաստանին:

Մենք չենք պատկերացնում, թե որքան սարսափելի կլինի լիակատար կործանման տեսարանը, բայց Աստված ունի երկիրը մաքրելու միջոց: Հովհաննեսը տեսավ մի հրեշտակ, որը կանգնած էր արևի տակ և բարձր ձայնով աղաղակում էր բոլոր թռչուններին, որոնք թռչում էին օդում. «Եվ մի հրեշտակ տեսա, որ կանգնած էր արևի մեջ ու բարձր ձայնով աղաղակեց երկնքի մեջ թռչող բոլոր թռչուններին՝ ասելով. «Եկե՛ք, մեծ Աստծո ընթրիքին հավաքվե՛ք, որպեսզի ուտեք թագավորների մարմիններն ու հազարապետների մարմինները, հզոր մարդկանց մարմիններն ու ձիերի և նրանց հեծյալների մարմինները, բոլորի մարմինները՝ թե՛ ազատների, թե՛ ծառաների, թե՛ փոքրերի, թե՛ մեծերի» (Հայտ. 19:17-18): Այնուհետև կարդում ենք, որ «բոլոր թռչունները նրանց մարմիններով կշտացան» (Հայտ. 19:21):

Իմիջիայլոց նշենք, որ որոշ բաներ ներառված չեն Հովհաննեսի տեսիլքներում, սակայն դրանք պետք է կատարվեն մոտավորապես այդ նույն ժամանակաշրջանում: Օրինակ՝ Տեր Հիսուսը, բացի Արմագեդոնի պատերազմից, մղելու է նաև այլ պատերազմներ, ինչպես Եդովմի և Բոսրայի պատերազմը (Եսայի 63:1):

Այնուհետև հրեշտակին հանձնարարվում է իջնել երկնքից և բռնել սատանային, կապել նրան ու անդունդը նետել, որտեղ նա կմնա 1000 տարի: Այս ընթացքում նա այլևս չի կարողանա խաբել ազգերին, քանի դեռ չի ավարտվել 1000 տարին: Դրանից հետո նա կարճ ժամանակով կազատվի, իսկ հետո վերջնականապես կնետվի Կրակե լիճը (Հայտ. 20:1-3):

QMBC պանորամա



## **Օգնություն եմ փնտրում**

- Ես մի քանի տարվա հավատացյալ եմ և գիտեմ, որ Տերն ուզում է՝ լիովին վստահեմ և կյանքս հանձնեմ Իրեն, սակայն դա պարզապես չի ստացվում:
- Ուրեմն կներե՞ս. ես չեմ կարող օգնել քեզ, քանի որ դու օգնություն չես ուզում:
- Իհարկե, ուզում եմ: Ես քեզ հետ չեի գրուցի, եթե դրա կարիքը չունենայի:
- Նա, ով կարող է օգնել քեզ, Տեր Հիսուսն է, բայց դու չես ուզում, որ Նա անի դա:
- Ի՞նչ նկատի ունես: Ես ուզում եմ, որ Նա անի դա:
- Բայց Նա կանչեց քեզ՝ Իրեն վստահելու ու քո կյանքն Իրեն հանձնելու: Նրա խոստումն է. եթե կորցնես կյանքդ, կգտնես այն:
- Ես գիտեմ, բայց դա կարծես միայն տեսություն լինի: Չեմ կարողանում անել դա:
- Եթե անելու կարողությունը չունենայիր, ապա ինչո՞ւ Տերը կխնդրեր քեզ դա անել: Լավ հայրը չի ասում իր երեխային անել ինչոր անհնարին բան, Տերն էլ չի ասել, որ անես անհնարինը:
- Բայց ես չեմ կարող դա անել: Չափազանց դժվար է: Ես հարյուր անգամ փորձել եմ:
- Եթե չես կարողանում անել դա, ուրեմն Տերը սխալվել է: Եթե չես անում, ուրեմն դու ես սխալվել: Քո կարծիքով ո՞վ է սխալվել:
- Վե՛րջ: Սա ինձ ամենևին դուր չի գալիս: Դու ուղղակի բառախաղ ես անում:
- Ո՛չ, բառախաղ չեմ անում, և սա խաղ չէ: Եթե իրականում կյանքդ չհանձնես Նրան, ով այնքան սիրեց քեզ, որ մահացավ քեզ համար, ուրեմն դու ունես մի պատճառ, և ինքդ պետք է այդ պատճառը բացահայտես: Երբ ասում ես, թե չես կարողանում հնա-

զանդվել Նրան, ապա իրականում քո իրավիճակի համար Աստծուն ես մեղադրում, և այդպես անելը քեզ ոչնչով չի օգնի:

- Լսի՛ր, ես իսկապես ուզում եմ ապրել Նրա համար, բայց դա դժվար է: Բոլորը գիտեն, որ դա դժվար է:
- Բոլորը, բացի Հիսուսից: Նա ասաց. «Իմ լուծը քաղցր է, և իմ բեռը՝ թեթև»:
- Ուրեմն ուզում ես ասել, որ կյանքս չեմ հանձնում Նրան, քանի որ պարզապես չե՞մ ուզում դա անել:
- Այո՛, այդպես է, և դու ունես մի պատճառ կամ գուցե շատ պատճառներ, թե ինչու չես ուզում:
- Եվ որո՞նք են դրանք:
- Դա մի բան է, որ Տերը կասի քեզ: Խնդրի՛ր Նրան ցույց տալ քեզ այն, ինչ կա քո սրտում, այն, ինչ դու ավելի շատ ես գնահատում, քան Նրան:
- Ես վախենում եմ: Բայց ի՞նչ կլինի, եթե խնդրեմ Նրան ցույց տալ ինձ, և երբ իմանամ, տակավին չուզենամ ձերբազատվել դրանից:
- Նա, անշուշտ, ապաշխարության հոգի կշնորհի քեզ, եթե կամենաս դիմել Նրան, սակայն չի անտեսի քո կամքը: Դա պետք է լինի քո ընտրությունը: Բայց եթե չդիմես Նրան, ապա քո ընտրությունն արդեն արված է: Այդպես դու ցույց կտաս, որ խավարն ավելի շատ ես սիրում, քան լույսը:
- Ի՞նչ անեմ: Ես ինձ թակարդում եմ զգում:
- Աստծո սիրո թակարդում, ով ընտրեց քեզ ու կանչեց՝ Իր փառքի մեջ լինելու: Այս կոչը լուրջ է, այն ժամանցային զբաղմունք չէ, որին կարող ես թեթևությամբ վերաբերվել: Իսկ ինչո՞ւ պետք է լուրջ վերաբերվես: Զանի որ Նա հավատարիմ հովվի պես, պատրաստ է առաջնորդելու քեզ այն ամենի մեջ, ինչ ծրագրել է քեզ համար: Ինչո՞ւ չըջվել Նրանից, ինչո՞ւ նահանջել, ինչո՞ւ դիմադրել Նրան:
- «Ինձ մո՛տ եկեք, բոլոր հոգնածներ և բեռնավորվածներ, և Ես

ձեզ հանգստություն կտամ: Իմ լուծը ձեր վրա վերցրե՛ք և Ինձնից սովորեցե՛ք, որ Ես հեզ եմ ու սրտով խոնարհ. և ձեր անձերի համար հանգստություն կգտնեք, որովհետև Իմ լուծը քաղցր է, և Իմ բեռը՝ թեթև»» (Մատթ. 11:28-30):

Նեյլ Բուքման

## **Ո՞ր դուռը** **(Մատթեոս 22:1-14)**

**Ռ**ոբերտ Մուրի Մը Քեյնը համարվում է շոտլանդացի հզոր քարոզիչներից մեկը: Սի օր՝ երեկոյան, նա քարոզում էր Հիսուսի բառերով.

«Ես եմ դուռը, եթե մեկն ինձանով ներս մտնի, կապրի, և՛ կմտնի, և՛ դուրս կգա, և՛ արդա կգտնի» (Հովհ. 10:9):

Քարոզը լսողներից մեկը վերջում մոտենում է ու ասում. «Ես ամբողջ կյանքիս ընթացքում եկեղեցու անդամ եմ եղել, բայց մինչև հիմա երբեք ինձ Քրիստոսին մոտ չեմ գգացել: Այսօր, երբ լսեցի ձեր քարոզը, ինչ-որ բան կատարվեց ինձ հետ. ես գգացի, որ Հիսուսն ինձ շատ մոտ է, և գիտակցեցի տարիներ շարունակ իմ թույլ տված սխալը: Ես փորձում էի սխալ դռնով մտնել, ես փորձում էի սրբերի դռնով մտնել, բայց դուք այսօր հստակ ասացիք, որ ես պետք է մեղավորների դռնով մտնեմ»:

Եթե ամեն շաբաթ եկեղեցի ենք գնում՝ ինքներս մեզ ապացուցելու ու ամրապնդելու այն մոլորությունը, որ մենք կատարյալ ենք, ապա չենք մոտենա Հիսուսին, որովհետև սխալ դռնով ենք մտնում: Եթե ամեն շաբաթ եկեղեցի ենք գնում հպարտ փարիսեցու աղոթքը կրկնելու. «Ո՛վ, Աստված, գոհանում եմ քեզանից, որ այնպիսին չեմ, ինչպիսին մյուս մարդիկ՝ հափշտակող, անիրավ, շնացող» (Դուկ. 18:11), ապա չենք մոտենա Հիսուսին, որովհետև սխալ դռնով ենք մտնում:

Եթե ամեն շաբաթ գնում ենք եկեղեցի և չենք արձագանքում մաքսավորի աղոթքին. «Ո՛վ, Աստված, ողորմի՛ր ինձ՝ մեղավորիս» (Դուկ.

18:13), ապա Տիրոջը չենք մոտենում, որովհետև սխալ դռնով ենք մտնում:

Այսօր շատ կրոնավորներ կան, ովքեր սովորեցնում են, թե մարդը նախ պետք է մաքրվի մեղքերից, անմեղ դառնա, հետո միայն թակի Աստծո դուռը: Իսկական քրիստոնեության մեջ մարդը՝ որպես մեղավոր է թակում դուռը, իսկ թակոցին պատասխանողը բժշկում է նրան: Քրիստոսի դուռը մեղավորների առջև բաց է ոչ թե նրանց սրբության ու մաքրության, այլ նրանց մեղավորության ու թշվառության համար: Մեղավոր լինելը խնդիր է, իսկ մեղավոր լինելու գիտակցումը մեր հույսն է:

Հիսուսը կրոնական առաջնորդներին ասաց.

«Ես չեմ եկել արդարներին կանչելու, այլ մեղավորներին՝ ապաշխարության» (Ղուկ. 5:32):

Հիսուսը բոլորին ապաշխարության է կանչում: Աստված իսկապես սիրում է մեզ՝ թույլ, մեղավոր մարդկանց, ովքեր աննպատակ թափառում են երկրի վրա: Աստված իսկապես սիրում է մեզ և ուզում է, որ արձագանքենք այդ սիրուն: Նա մեզ տվել է ընտրության ազատություն. ապրել Իր իշխանության ներքո կամ ինքնակամ ընթանալ մեր ճանապարհներով:

Աստված մեզանից ավելին է ուզում, քան զոհողությունն ու կրոնն են: Նա ուզում է, որ հետ դառնանք սխալ դռնից և ճիշտ դռնով ազատ մտնենք: Նա ուզում է, որ մենք հրաժարվենք եսակենտրոնությունից, հպարտությունից ու մեզ իրենից զատող մեղքերից:

Այժմ դուռը բաց է քո առջև, բայց երկու արգելք կա՝ քեզ չափազանց լավը կամ չափազանց վատը համարելը: Աստծուն մոտենալու համար բնավ չես կարող կա՛ն չափազանց լավը, կա՛ն չափազանց վատը լինել: Հիսուսն ասում է. «Խնդրեցե՛ք և կտրվի ձեզ, որոնեցե՛ք և կգտնեք, դուռը թակեցե՛ք և կբացվի ձեր առջև» (Մատթ. 7:7):

Վեր.՝ Հովսեփի Հովսեփյան



## Հիսուսը՝ մեր կարեկիցը

(Մատթ. 8:1-4)

**Տ**եր Հիսուսը բժշկեց բազմաթիվ մարդկանց երբեմն խոսքով, երբեմն գործողությամբ: Երբեմն հիվանդն էր անձամբ Հիսուսից խնդրում, երբեմն ուրիշն էր խնդրում հիվանդի անունից, երբեմն էլ ոչ ոք չէր խնդրում, Հիսուսն էր պարզապես կամենում: Այս բոլորն ընդգծվում է մի կարմիր գծով՝ անկախ այն հանգամանքից՝ անձն էր Հիսուսին մոտենում, թե միջնորդն էր բարեխոսում, թե Հիսուսն էր կամենում..., բոլոր բժշկությունների հիմքում ընկած էր կարևոր դրդապատճառ, շարժառիթ՝ Հիսուսի կարեկցությունը, գուրբ:

Այս բժշկությունները կամ հրաշքները գործելու ուրիշ դրդապատճառներ ևս կան Ավետարաններում նշված: Օրինակ՝ Հովհ. 10:38-ում Հիսուսը հրեաներին խորհուրդ է տալիս, որ եթե Իրեն չեն հավատում, զոնե Իր կատարած գործերին հավատան, այսինքն՝ հրաշքներից, ու դրա արդյունքով հավատան, որ Հայրն Իր մեջ է և Ինքը՝ Հոր մեջ: Մեկ այլ խոսքով՝ հրաշքների դրդապատճառն այս համատեքստում հրեաներին հավատքի բերելն էր:

Դրդապատճառներից ևս մեկը Աստծուն փառավորելն էր: Հիսուսը հրաշքներ գործեց, որպեսզի Աստծուն փառավորի, և մարդիկ հավատան, որ Հայրն է ուղարկել Իրեն, ինչպես կարդում ենք Ղազարոսի՝ մեռելներից հարություն առնելու պատմության մեջ:

Այնուամենայնիվ, կարծում եմ՝ սխալ չէ ասելը, որ հրաշքների հիմնական դրդապատճառներից մեկը Հիսուսի կարեկցող, գթացող և ողորմած լինելն է, ինչը չքացել է մարդկային հարաբերություններից, և եթե էլ կա, հաճախ մակերեսային է, արհեստական կամ շահադիտական նպատակ ունի: Դա զարմանալի չէ, քանի որ անկարեկից, անգուր ու անողորմ լինելը վերջին օրերի նշաններից մեկն է, ինչպես Պողոս առաքյալն է ասում Բ Տիմ. 3:1-3-ում:

Կարծում եմ՝ ավելորդ է օրինակներ թվարկելը՝ ապացուցելու համար, թե մենք ականատեսն ենք անկարեկից, անողորմ և անգուր

հարաբերությունների, վերաբերմունքի թե՛ միջանձնային և թե՛ միջազգային շփումներում:

Այս պատգամով անդրադառնալու ենք երկու հարցերի.

1. Որո՞նք են անկարեկից լինելու պատճառները:
2. Ի՞նչ է նշանակում կարեկից լինել և ինչպե՞ս է դա դրսևորվում այս հատվածում:

### **1. Որո՞նք են անկարեկից լինելու պատճառները**

**Ա. Անտարքեր լինելը:** Վերջերս շատ ենք լսում, որ երկրում անտարբերության մթնոլորտ է տիրում: Անտարբերություն ամեն ինչի նկատմամբ: Երբ մարդն անտարբեր է, նրա համար նշանակություն չունի, թե կողքին ինչի միջով է անցնում: Նրա սրտում կարեկցանք չկա: Անտարբերությունը անկարեկից լինելու գլխավոր պատճառներից մեկն է:

Հեռուստացույցով տեսած կլիներ հաղորդում, որտեղ ցուցադրվում է, թե ինչպես է վագրերի խումբը հարձակվում ցուլերի մեծ խմբի վրա ու մեկին թիրախավորելով՝ հոշոտում դրան: Եթե խմբում 5-6 վագր է լինում, ապա ցուլերի խմբում 100-200 ցուլ կա, որոնք, մի քանի հարյուր մետր այն կողմ կանգնած, առանց որևէ գործողության, հանդիսատեսի դեր են տանում, մինչ իրենց ցեղակիցը վագրերի բաժին է դառնում: Ահա սա է անտարբերությունը:

**Բ. Անձնասեր լինելը:** Այս բառը գլխավորում է Բ Տիմ. 3:1-3-ի հատվածը, որտեղ խոսվում է այն մասին, թե վերջին օրերում մարդիկ ինչպիսիք են լինելու:

Քանի որ անձը ինքն իրենով է զբաղված, իրենով է մտախոգված, ինքն իրեն է սիրում, ի՞նչ կարեկցանք, ի՞նչ գութ, ի՞նչ գլխացավանք... Բավական չե՞ն իմ օրվա հոգսերը, բավական չե՞ն իմ կարիքները, իմ պլանները, իմ ընտանիքը, իմ եկեղեցին...

Սրանք կարծես քիչ են, մեղիան իր տարբեր լծակներով սա է սովորեցնում մեր երեխաներին: Այնպիսի մի սերունդ է աճում, որի կենտրոնը անձն է:

**Գ. Կյանքի դառնությունը:** Դառնությունը բույն է դնում քո մեջ, երբ որոշ պատճառներով սովորում ես այլևս ոչ ոքի բարիք չանել, երբ կյանքում այնպիսի դառը փորձառություններ ես ունենում, որոնց պատճառով կտրականապես հրաժարվում ես մարդկանց ձեռք մեկնելուց, և քեզ համար սկզբունք ես որդեգրում երբեք մարդու կարեկից չլինել, քանի որ ըստ քեզ՝ բոլորն էլ զցող են, չարախոսող են:

Արժե՛ այստեղ մեջքերել մայր Թերեզայի խոսքերը.

- Եթե բարություն եք գործել և մարդիկ մեղադրել են ձեզ եսասիրական ծածուկ մտադրության մեջ, միևնույնն է, բարություն գործեք:
- Եթե ազնիվ եք ու անկեղծ, մարդիկ կխաբեն ձեզ, միևնույնն է, մնացե՛ք ազնիվ և անկեղծ:
- Այսօրվա Ձեր գործած բարությունը մարդիկ վաղը կմոռանան, միևնույնն է, բարի՛ք գործեք:

Անտարբերություն, անձնասիրություն և կյանքի դառնություն՝ աղվեսի երեք ձագեր, որոնք փչացնում են կարեկցության մեր այգին, և որոնց պատճառով դառնում ենք անկարեկից:

## **2. Ի՞նչ է նշանակում կարեկից լինել և ինչպե՞ս է դա դրսևորվում այս հատվածում**

Բառարանը այսպես է բացատրում. կարեկից լինել նշանակում է զգայուն վերաբերմունք ցուցաբերել ուրիշի վշտի, հուզմունքների նկատմամբ, ցավակից լինել:

- Կարեկից լինելը զգայուն վերաբերմունք է: Դա նրբանկատ, չափված-ձևված, հավասարակշռված խոսք ու գործողություն է:
- Դա դիմացինի նեղության ժամանակ նրա հույզերը, բնավորությունը, էությունը, վախերը, կասկածները, փորձառածը հաշվի առնելով խոսելն ու գործելն է և ոչ թե սանձարձակ, տեղիմանտեղին խոսելը կամ գործելը:

- Խոսքով կարեկից լինել չի նշանակում ուսուցանել: Սովորեցնելու սխալ ժամանակ ու անձ ես ընտրել, եթե մտածում ես, որ խոսքով կարեկցել նշանակում է անձի նեղության մեջ վարդապետություն սովորեցնել, կյանքի փորձ փոխանցել, ուղղություն ցույց տալ... Այդպես արեցին Հորի ընկերները:
- Խոսքով կարեկից լինել չի նշանակում հարցախեղդ անել, ինչպես հաճախ անում ենք:
- Գործնականորեն կարեկից լինել չի նշանակում ունեցած-չունեցած դժգոհություն՝ մի եղբոր կամ քրոջ օգնելու համար:

Լինում են մեծ պահեր, երբ լսում ենք, թե մեկի հետ ցավալի դեպք է պատահել, և մտածում ենք՝ որպեսզի Աստված թույլ չտա իմ կամ իմ հարազատների կյանքում մեծ ցավալի դեպք, ես պետք է ուրիշներին կարեկից լինեմ: Սա արդեն պարտականությունից, վախից դրդված կարեկցություն է: Իսկ կարեկցանքն իրականում պարտականությունից դրդված չպետք է լինի, այլ սրտի հոժարությունից:

Մարկոս 1-ում նշված է, որ Հիսուսը խղճաց նրան. ահա և դրդապատճառը: Հիմա եկե՛ք տեսնենք, թե ինչպես Հիսուսը նրբանկատորեն կարեկցեց նրան:

Բորոտությունը շատ լուրջ հիվանդություն էր, որը հաճախ տանում էր մահվան: Ըստ Հին Կտակարանի՝ բորոտները իրավունք չունեին հասարակության մեջ մտնելու ու մարդկանց հետ շփվելու (Գևտ. 13:45-46):

Բորոտությունը այնպիսի մի հիվանդություն էր, որը ոչ միայն հայումով էր փոխանցվում, այլև օդակաթիլային կերպով: Դրա համար ասվում էր, որ բորոտը պետք է իր բերանը ծածկի: Մի խոսքով, նրանք մարդկանցից լքված, հաղորդակցությունից, շփումից զրկված մարդիկ էին, և ահա այսպիսի հատկություններով մի մարդ, ով ոչ միայն ֆիզիկապես էր տանջված ու քայքայված, այլև հոգեպես, Հիսուսի առջև ծնկի գալով՝ համարձակ խնդրեց՝ ասելով. «Եթե կամենաս, կարող ես ինձ մաքրել»: Հիսուսը, խղճալով նրան, Իր ձեռքը մեկնեց ու հպվեց նրան՝ ասելով. «Կամենում եմ, մաքրվիր»:

Հիսուսն, իհարկե, կարող էր նրան բժշկել միայն խոսքով՝ հեռավորություն պահպանելով: Նա կարող էր գործով բժշկել /ոչ հպումով/, ինչպես կույրին ասաց, որ գնա Սելովամի ավազանի մոտ ու աչքերը լվանա ու կբժշկվի:

Իրականում Մատթ. 8-րդ գլուխը լի է նման հրաշքներով: Օրինակ՝ հարյուրապետի ծառայի բժշկությունը Հիսուսը կատարեց միայն խոսքով՝ հեռավորության վրա: Պետրոսի զոքանչին Հիսուսը բժշկեց միայն հպումով, սակայն այստեղ Նա բորոտին բժշկում է և՛ հպումով, և՛ խոսքով:

Հետաքրքրական է նկատել, որ Հիսուսը նախ հավեց, հետո ասաց՝ կամենում եմ, ու նա բժշկվեց:

Հիշենք, որ բորոտին հավելը հավասարազոր էր մահացած մարմնին հավելուն: Հրեական Օրենքի համաձայն՝ երկու դեպքում էլ բորոտությամբ հիվանդ անձը անմաքուր էր համարվում, և բուժվելուց հետո պետք է որոշ ընթացակարգ անցներ, մաքուր հայտարարվեր ու նոր միանար համայնքին:

Հիմա ինքներդ ձեզ դրեք բորոտի տեղը: Նա Հիսուսի մեջ տեսնում էր մաքուր, սուրբ անձնավորություն: Նրա մտածելակերպում դաջված էր այն միտքը, որ ով իրեն հավեր, անմաքուր կլիներ: Նա երբեք չէր ակնկալում, որ Հիսուսն իրեն կհավի, այն էլ այդքան մարդկանց առաջ: Ու երբ հավեց, Նա նույնպես իր նման անմաքուր եղավ, և անմաքուր լինելով՝ այլևս ինչպե՞ս կարող էր իրեն մաքրել: Բորոտը բորոտին ինչպե՞ս օգնի:

Սակայն Հիսուսը չթողեց, որ նա այդպիսի մտքերից տառապի և միանգամից ասաց՝ կամենում եմ, մաքրվիր:

Հետաքրքրական է նաև այն, թե իրականում ե՞րբ կատարվեց հրաշքը՝ հավելու պահի՞ն, թե՞ խոսքը Հիսուսի բերանից դուրս գալու պահին: Երկու տարբերակներն էլ հնարավոր են: Սի անգամ տասներկու տարի արյունահոսություն ունեցող կինը թաքուն հավեց Հիսուսի քղանցքին, ու միանգամից նրա արյունահոսությունը դադարեց:

Հիսուսը կարող էր միայն հպումով բժշկել կամ միայն խոսքով, որը ավելի քիչ աղմուկ կբարձրացներ հրեաների տեսանկյունից:

Սակայն Տերն արեց երկուսն էլ: Ինչո՞ւ: Բժշկության հետ մեկտեղ Հիսուսն այստեղ բացահայտեց Իր կարեկցանքի անսահմանությունը ու խորությունը, որը վեր է ամեն տեսակի մարդկային սահմանափակումից:

Բորոտին ոչ ոք չի համարձակում հպվել ո՛չ իրեն, ո՛չ էլ նրան պատկանող իրերին:

Բորոտին ոչ ոք թույլ չի տա մոտ հեռավորություն պահպանել, առավել ևս շփվել, սակայն Հիսուսը նրբանկատորեն պարզեց նրան և՛ ֆիզիկական, և՛ հոգեկան բժշկություն, փարատեց մարդկանցից լքված լինելու, արհամարհված լինելու հոգեկան վիշտը, վերականգնեց նրա մարդկային արժանապատվությունը:

Հիսուսը կարող էր բժշկել միայն խոսքով կամ միայն գործով, սակայն երկուսն էլ կիրառեց՝ ցույց տալով Իր կարեկցության անկրկնականությունը, գերազանցությունը:

Թող որ անտարբերությունը, անձնասիրությունն ու կյանքի դառնությունը հետ չպահեն ձեզ կարեկից լինելուց: Տեր Հիսուսի օրինակին հետևենք և սե՛ր ցուցաբերենք, քանի որ մարդիկ դրանով են ճանաչելու մեզ՝ որպես Քրիստոսի հետևորդների:

Վարդան Սարգիսյան

---

«Այս աշխարհում հարուստ եղողներին պատվիրիր, որ չգոռոզանան և անստույգ հարստության վրա հույս չդնեն, այլ՝ Կենդանի Աստծո վրա, որ ամեն բան առատորեն տալիս է մեզ՝ վայելելու համար, որ բարի՛ք գործեն և բարի գործերով հարուստ լինեն, բաժանելու պատրաստ, բաժնեկցելու հոժար, իրենց համար լավ հիմք զանձելով գալիք ժամանակի համար, որպեսզի հավիտենական կյանքն ամուր բռնեն»:


**Ա ՏԻՄ. 6:17-19**

## Հայաստանի ՄԱԸ

«Օրհնյալ է այն ազգը, որի Աստվածը Տերն է» (Մադ. 33:12): Տեր Հիսուսն Իր հարությունից հետո Պետրոսի հետ կարևոր խոսակցություն ունեցավ: Տերն ասաց. «Եթե ինձ սիրում ես, ուրեմն ծառայությանդ մի բաժինը պետք է լինի Իմ գառնուկներին արածեցնելը (կերակրելը)»: Փոքրիկները հաճախ չեն կարողանում ինքնուրույն սնվել և մեծերի օգնության կարիքն են ունենում: Տիրոջ գառնուկներին կերակրելը և անձամբ մի գավաթ պաղ ջուր խմեցնելը մեծ և կարևոր աշխատանք է, որի անհրաժեշտությունը տեսնել և հնազանդվել է պետք:

Մեր շրջապատում գտնվող երեխաներն ապրում են այնպիսի ժամանակներում, որը լի է բացասական խոսքերով և վնասակար արարքներով: Նրանց սովորեցնում են, որ անձնասեր և ինքնավստահ լինելը ճիշտ է, ազատ են իրենց որոշումների մեջ, ճշմարտությունը հարաբերական է, և չկա բացարձակ ճշմարտություն, կարող են չհնազանդվել ծնողներին, քանի որ նրանք հաճախ խառնվում են իրենց կյանքին, քանի որ չգիտեն իրենց սահմանները, խրախուսվում է դաժանությունը: Խեղաթյուրված է ընտանիք հասկացությունը: Երեխաներին և պատանիներին քաջալերում են, որ կարող են իրենց մարմնի հետ անել այն, ինչ ուզում են, քանի որ այն իրենց է պատկանում: Նրանք ընկնում են չարի կողմից կառավարվող ազատություն կոչվածի թակարդը և վնասվում են: Խեղճ երեխաները կարծում են, որ ազատ են, սակայն նրանք վտանգված են, անպաշտպան և գերելարված չարի կողմից, այսինքն՝ քայլ առ քայլ հեռանալ Աստծո պատկերով և նմանությամբ ստեղծված և Աստծուն փառք բերող մարդ լինելուց:

Իհարկե, այս օրերում բավական դժվարացել է երեխաներին Տիրոջ Խոսքը հասցնելը, սակայն եկեղեցիները հաճախ արդարացումներ են փնտրում և փորձում են մեղադրել աշխարհին ու սատանային: Կարիք կա արթնանալու և հոգևոր կյանքին լրջությամբ վերաբերվելու, որ կարողանանք ճշմարտությամբ ապրել և հետևել ճշմարիտին:



Շատերս բավարարվում ենք ավելի հանգիստ կամ դյուրին ծառայությունների անելով: Աղոթքը մանուկների ավետարանչության ամենակարևոր բաժինն է, սակայն պետք է ոչ միայն աղոթենք, այլ նաև աղոթքով գործենք: Հովհ. 5:1-15-ում հանդիպում ենք մի մարդու, ով 38 տարի հիվանդ էր: Նրան գրտնում ենք Բեթեզդայի ավազանի մոտ իր մահճին պառկած: Նա դանդաղաշարժ էր դարձել, քանի որ մկանները թուլացել էին երկար ժամանակ հիվանդ և պառկած մնալուց: Շատերս ժամանակին արագ էինք վազում, բայց հիմա դանդաղաշարժ ենք դարձել: Երբ քիչ ենք շարժվում, մեր մկանները տկարանում են և բազմաթիվ հիվանդությունների պատճառ են դառնում: Կարիք ունենք Տիրոջ միջամտության և Նրան հնազանդվելուն:

Սուրբ Հոգու օգնությամբ ոտքի կանգնենք. թող զորանան մեր հոգիները, որ վազենք Տիրոջ համար:

Մեծ սիրով՝

Հայաստանի Մանկանց ավետարանչության  
ընկերակցություն